ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Աշոտ Ղարագյոզյան ՍՊԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՀՆԴՁ/2024/Հ-13 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
4	ամենօրյա կոշկեղեն	ամենօրյա կոշկեղեն	ամենօրյա կոշկեղեն	Աշոտ Ղարագյոզյան ՍՊԸ	Սև գույնի, բնական կաշվից, 1.2-1.4 մմ հաստությամբ: Բաղկացած է երեսամասից, միջնատակից, հիմնական ներդիրից, հանովի-դնովի ներդիրից, արտաքին ներբանից: Արտաքին ներբանը պատրաստվում է պոլիուռետանային հումքից: Ներբանի միացման եղանակը վերնամասին՝ միաձույլ: Երեսամասը պատրաստված է հարթ և նախշով (նակատով) կաշիների համադրությամբ: Հետնամասի և լեզվակի եզրով, երեսամասի և միջնատակի միջև տեղադրված է առաձգական ծակոտկեն սինթետիկ

					կտոր, ընդ որում հետնամասի եզրով 8 մմ հաստությամբ, լեզվակի եզրով՝ 4 մմ։ Կաշվե դետալները հակառակ կողմից մշակվում են տաքացվող սոսնձով գործվածքով, որը կտա երեսամասին հավելյալ ամրություն և կհաղորդի չափավոր ծավալային կայունություն։ Միջնատակը պատրաստված է շնչող, ծակոտկեն գործվածքից, որը երեսապատված է առաձգական, ծակոտկեն սինթետիկ նյութով, ինչն էլ հաղորդում է կոշիկի ներսի ծածկույթին հավելյալ փափկություն և հարմարավետություն։ Քթամասը և կրնկամասը կոշտ են և ունեն լրացուցիչ կոշտություն ապահովող պինգ-պոնգ տեսակի թերմոպլաստե նյութից ներդիրներ՝ հարվածներից և դեֆորմացիայից ապահովելու համար, որոնք լրացուցիչ երեսպատված են միկրոֆիբրայի և պոլիվինիլխլորիդի նյութով, կամ համանման, ինչը կապահովի լրացուցիչ պաշտպանություն մեխանիկական վնասվածքներից և քերծվածքներից, ընդ որում քթամասում առնվազն 0.8 մմ հաստությամբ, կրնկամասում՝ 1.5

						մմ։ Կոշիկի վերնամասի ամբողջ եզրը կարվում է դեպի ներս ծալվածքով։ Հիմնական ներդիրը բաղկացած է իրար սոսնձված 2.0-2.2 մմ հաստությամբ կոշիկի համար նախատեսված ամբողջական ստվարաթղթից, որը շարունակվում է մինչև թաթը։ Առաջամասի, միջնամասի և հետևամասի եզրերը միացված են ներբանին միաձույլ եղանակով։ Առաջամասի կենտրոնական առանցքով տեղադրված են 4 զույգ մետաղական փոլակներ և մեկ զույգ կեռիկներ։ Հանովի-դնովի ներդիրը պետք է պատրաստված լինի բնական կաշվի և պոլիուռետանային հումքի համադրությունից։ Ներբանը պատրաստվում է մաշակայուն պոլիուռետանային հումքից, ընդորում՝ • քթամասի հաստությունը՝ առնվազն 15.5 մմ հետքով, • կրնկամասի հաստությունը՝ առնվազն 28.5 մմ հետքով, • հետքի (նախշի) խորությունը կրնկամասում 4.0-4.5 մմ, թաթի հատվածում 4.0-5.0 մմ։ Կապումն իրականացվում է սև

					գույնի քուղերից պատրաստված սինթետիկ քիմիական մանրաթելից՝ յուրաքանչյուրի վերջույթները թերմոմշակված են: Երկարությունը՝ 110 սմ: Կոշիկի կաղապարը պետք է համապատասխանի ԳՈՍՏ 3927-88-ի պահանջներին: Կարերի ամրությունը համաձայն ԳՈՍՏ 447 պետք է լինի 115 Ն/սմ կամ 11.5 կգ/սմ: Արտաքին տեսքը՝ լուսանկարին համաձայն: Հաստատված նմուշը տրամադրվում է պատվիրատուի կողմից: Փաթեթավորումը՝ ստվարաթղթե արկղերով՝ անցքերով, արկղերի մեջ 10 զույգ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Անհրաժեշտության դեպքում պատվիրատուի պահանջով տրամադրվում է լաբորատոր ստուգման եզրակացությունը: Չափսերը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Մատակարարումից հետո հայտնաբերված խոտանի դեպքում

					Մատակարարը պարտավոր է Պատվիրատուի պահանջով դրանք վերացնել։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО АШОТ КАРАГЕЗЯН в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՀՆԴՁ/2024/Հ-13 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
4	-	-	-	-	-